

67. ԳՌՈՇ ԹԱԳԱՎՈՐ

Ժամանակով թագավոր մե կը կանչե ուր էրկրի խելոքներուն,
հըսե.

— Դուք իմ էրկրի խելոքներն իք, գինաք ի՛նչ մալ ու ապրտնք
ի՛նչ աժե, մկա կանչեր իմ, օր զիմ գին դնիք, ո՛ն սուտ ըսե, յա
սխալվի՝ զվիզ կը թոցում:

էդ էրկրի խելոքներ յիրար կիշկին, շատ կը մտածին, հմա կը
վախենան թագավորի գին դնին:

Ըրոց մեջ կէղնի հավոր իմաստուն մե, յառեջ գիկա, կըսե ուր
յընկերներուն:

— Տարեք գիսի մըտ էրկրի թագավոր, ես ըզոր գին կը դնիմ:
էրկրի խելոքներ շատ կը խնդանան, ուրախ-զուրսի կառնին
ըհավոր, կը տանին թագավորի յառեջ կը կանգըցուն, կըսին.

— Օղորմա՛ծ թագավոր, իդ:— Կավոր մեր յրմնուց խելոքն ու
իմաստունն է, ըզի կոնա զքու դին դնե:

— Աղե՛կ,— կըսե թագավոր:

Հավորն յառեջ գիկա, կը խոնարվի թագավորին, կըսե.

— Թագավո՛ր ապրած, քու գին գող յմե:

— Ի՛ մալ,— կը հերստի թագավոր,— իմ պես թագավոր մե
ուր քաշով օսկու չըն կոնա առնի, մկա աժիմ գող շ մե:

— Հա՛, վո՛ւա,— կըսե հավոր,— աժիս դող մե ու գող մե.
չըմքի իդա խելոքներուն օր գնին՝ ընդոնք կոնան դործ մե, բան մե
էնին, օգուտ տան, քըզի օր գնին՝ քըզնե օգուտ չկա, չըմքի գնու
պտի ծառայե քըզի, չէ թե դու ընդոր, էդ յապով լե, թագավո՛ր ապ-
րած, քու դին գող մե:

